



ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն, վարչական շենք, 2-րդ հարկ, հեռ.(223) 2-65-70, info\_hrazdan@aarhus.am

28.08.2014 C N 08/14

ՀՀ բնապահպանության նախարար  
Ա. Գրիգորյանին  
Հրազդանի Օրհուս կենտրոնի  
համակարգողներ Ա. Մնացականյանից և  
Ժ. Առաքելյանից

### Տեղեկատվություն ստանալու հարցում

#### Հարգելի պարոն նախարար,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ-ի կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի պահպանությունը, հասարակության իրազեկության բարձրացումը, խնդրում ենք Ձեզ՝ Հրազդանի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն օրերս Ծաղկաձորի «Գրողների տան» հարակից անտառում կտրված բազմաթիվ ծառերի (այդ թվում տանձենիներ, մատղաշ կաղնիներ և այլն) վերաբերյալ.

- Ում կողմից են իրականացվել ծառահատումները և ինչ նպատակով
- Խնդրում ենք տրամադրել թույլտվության բնօրինակի պատճենը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում ենք՝ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադումը մերժելու դեպքում՝ խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մեր ժաման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն

Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգող՝ Ա. Մնացականյան